

## Գեղարքունիքի մարզպետն ընդունեց Մարդու իրավունքների պաշտպանին

22.12.2016

Դեկտեմբերի 22-ին Մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը ճանաչողական այցով եղավ Գեղարքունիքի մարզում: Այցի շրջանակներում Պաշտպանը եւ գրասենյակի աշխատակազմի ներկայացուցիչները Գեղարքունիքի մարզպետարանում հանդիպում ունեցան Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի հետ: Կողմերը քննարկեցին մարզում մարդու իրավունքների պաշտպանության հետ կապված խնդիրները, ինչպես նաեւ քաղաքացիների՝ այդ խնդիրներին առնչվող անհատական բողոքները: Նրանք կարևորեցին նման ձևաչափով հանդիպումները, քանզի դրանք կարող են նպաստել քաղաքացիների կողմից բարձրացված խնդիրների համատեղ և ավելի արդյունավետ լուծմանը: ,, Գեղարքունիքի մարզի քաղաքացիների կողմից բարձրացված բոլոր խնդիրները գտնվում են մեր ամենօրյա ուշադրության կենտրոնում և մենք անում ենք հնարավորը՝ դրանց, մեր լիազորությունների և օրենքի շրջանակներում լուծում տալու համար: Ես ողջունում եմ Մարդու իրավունքների պաշտպանի այս նախաձեռնությունը և համոզված եմ, որ Գեղարքունիքի մարզպետարանի և ՄԻՊ-ի աշխատակազմերի միջև ձևավորվող այս աշխատատեղը կնպաստի, որպեսզի մարզի քաղաքացիների կողմից բարձրացված խնդիրները լուծում ստանան ավելի սեղմ ժամկետում և ավելի արդյունավետ եղանակով,,- իր խոսքում նշեց Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը:

Գեղարքունիքի մարզում Մարդու իրավունքների պաշտպանը հանդիպումներ է ունեցել Գավառի պետական համալսարանում և Մարդու իրավունքների պաշտպանի Գեղարքունիքի մարզային ստորաբաժանումում: